

ՄԱՍԼՈ ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յուլի 17, 2018թ.
Երևան

Մրցունակության համաշխարհային զեկուլյցի համաձայն Հայաստանի իր մրցունակությամբ 70-րդն է աշխարհի 140 երկրների մեջ

Համաշխարհային մրցունակության զեկուլյցում երկրների մրցունակությունը գնահատվում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Այն մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից և հաշվարկվում է մրցունակության 12 հենասյունների հիման վրա:

Ցուցիչի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների ամենամյա հարցումն իրականացվում է ՄՋ-ում ներառված երկրներում՝ ՀՏՖ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես ՀՏՖ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Համաշխարհային մրցունակության զեկուլյց 2018»-ի հիմնական արդյունքները:

2018թ.-ի զեկուլյցի արդյունքներով առաջատար երեք երկրներն են ԱՄՆ, Սինգապուրը և Գերմանիան: Մրցունակությամբ առաջին հնգյակում են նաև Շվեյցարիան և Ճապոնիան:

Եվրասիական տարածաշրջանի երկրների խմբում¹ առաջընթաց են արձանագրել Ռուսաստանը (2 կետով), Վրաստանը (1 կետով), Ուկրաինան (6 կետով), և Ղրղզստանը (3 կետով): Հայաստանը գրանցել է առաջընթաց 2 կետով: Հետընթաց են արձանագրել Ադրբեջանը (4 կետով), Տաջիկստանը (5 կետով) և Մոլդովան (1 կետով):

Համաշխարհային մրցունակության համաթիվ

	ՀԱՄ 2018	ՀԱՄ 2017	Փոփոխություն
	Տեղ	Տեղ	
Ռուսաստան	43	45	↑ 2
Ղազախստան	59	59	→ 0
Վրաստան	66	67	↑ 1
Ադրբեջան	69	65	↓ 4
Հայաստան	70	72	↑ 2
Ուկրաինա	83	89	↑ 6
Մոլդովա	88	87	↓ 1
Ղրղզստան	97	100	↑ 3
Տաջիկստան	102	97	↓ 5

¹ Չեկուլյցի հեղինակները Եվրասիա տարածաշրջանում ներառել են հետևյալ երկրները՝ ՌԴ, Մոլդովա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան:

2018թ. Մրցունակության համաշխարհային գեկույցում (ՄՋ) Հայաստանը 140 երկրների մեջ գրավում է 70-րդ տեղը:

Աշխատուժի շուկա հենասյունով Հայաստանը գրանցել է լավագույն ցուցանիշը և զբաղեցնում է 33-րդ տեղը 140 երկրների մեջ: Լավագույն միավոր գրանցվել է առողջապահության հենասյան համար (83 միավոր 100-ից): Վատագույն արդյունքներն ըստ տեղի և միավորի գրանցվել է շուկայի չափ հենասյունով:

Հայաստանի մրցունակության գնահատականն ըստ հենասյունների

ՀԱՄ հենասյունները	ՀԱՄ 2018 տեղ 140 երկրների մեջ	ՀԱՄ 2018 միավոր Առավելագույն 100-ից
Ինստիտուտներ	67	54
Ենթակառուցվածքներ	74	66
ՏՐՏ յուրացում	56	59
Մակրոտնտեսական կայունություն	89	72
Առողջապահություն	61	83
Կրթություն և հմտություններ	55	68
Ապրանքների շուկա	39	61
Աշխատուժի շուկա	33	65
Ֆինանսական համակարգ	87	54
Շուկայի չափ	118	37
Գործարար միջավայրի դինամիզմ	62	60
Նորարարության կարողություն	60	39

■ Լավագույն ■ Վատագույն

Մեկ ուսուցչին ընկնող աշակերտների հարաբերակցությունը, օտարերկրյա աշխատուժ ընդունելու դյուրինությունը Հայաստանի ուշագրավ առավելությունների շարքում են: Հայաստանի ուշագրավ առավելություններին են դասվում նաև բիզնես սկսելու հետ կապված գործընթացների քանակը, ժամկետները և ծախսերը, աշխատանքի ընդունման ու աշխատանքից հեռացման ճկունությունը: Մրցակցային թերությունների շարքում են սոցիալական կապիտալի մակարդակը, տրանսպորտային ենթակառուցվածքների, կապիտալի շուկայի զարգացածություն, աշխատուժի շարժունակությունը երկրի ներսում և մաքսային սակագների բարդությունը:

Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները

Ուշագրավ առավելություններ	Տեղ	Ուշագրավ թերություններ	Տեղ
Մեկ ուսուցչին ընկնող աշակերտների հարաբերակցություն	5	Սոցիալական կապիտալ	122
Օտարերկրյա աշխատուժ ընդունելու դյուրինություն	8	Ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածք	112
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակ	17	Շուկայի կապիտալիզացիա	110
Նոր բիզնես սկսելու հետ կապված ծախսեր	20	Աշխատուժի շարժունակությունը երկրի ներսում	110
Աշխատանքի ընդունման ու հեռացման ճկունություն	27	Մաքսային սակագների բարդություն	106

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Երևան 0010, Հանրապետության 37

Հեռ.՝ +37410 546434

Էլ-փոստ՝ info@ev.am

www.ev.am, www.evconsulting.com